ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻՄՐ ԳԵՈՐԳ ԴԱՔԵՍՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՄՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻՄՐ ԳԷՈՐԳ ԴԱՔԷՍԵԱՆ, ՈՐ ՅԱՄՄԱՆ, ՅՈՐԴԱՆԱՆ

Փառք ենք վերառաքում առ Աստուած, որ Մայր Հայրենիքից և համօրէն ազգիս Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բազմամղոն հեռաւորութեան վրայ գտնուող Բիբլիական Յորդանանի ափերին բնակութիւն հաստատած հաւատաւոր Մեր զաւակաց հոգիներում բոցավառ է սէրն ու նուիրումը առ ազգային ու եկեղեցական աւանդներն ու սրբութիւնները:

Սրտի անհուն ուրախութեամբ տեղեկացանք Յորդանանի հայոց բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Թօփալեանից ազգանպաստ ու եկեղեցանուէր Ձեր ձեռնարկումների մասին, որոնք պսակազարդում են Ձեր կենաց ճանապարհը:

Ուրախ ենք անչափ, որ հայապահպանութեան ու ազգասիրական վեհ զգացումներից մղուած՝ Ձեր անձնական միջոցներով հիմնել էք Կիլպէնկեան Ազգային Վարժարանի մանկամսուրի բաժինը և այժմ մեծ հոգատարութեամբ ու խանդավառութեամբ Սրբոց պատկերներով զարդարում էք Տիրոջ առաքելի անունը կրող Սուրբ Թադէոս եկեղեցին:

Եկեղեցանուէր անսակարկ ծառայութեան, մեր ամենքիս հոգիների ծնողավայր Մայր Եկեղեցու նկատմամբ ունեցած անուրանալի Ձեր վաստակի բարձր գնահատանքով՝ Միածնաէջ Սուրբ Աթոռից յղում ենք Հայրական Մեր սէրն ու

օրհնութիւնը և, ընդառաջելով բարեջան առաջնորդի ազնիւ խնդրանքին, Հայրապետական Մեր այսու Կոնդակաւ շնորհում ենք Ձեզ մեր Սուրբ Եկեղեցու

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ»

բարձրագոյն աստիճանի շքանշան:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Ամենակալ Տէրը բարեխօսութեամբ հաւատոյ Հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայցս աշխարհի, հանապազ օրհնութիւն բաշխի Ձեզ և ամուր ձեռամբ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը՝ շնորհելով Ձեզ յարատեւոգ յաջողութիւններ հայրենանուէր ու եկեղեցաշէն Ձեր բոլոր իրագործումներում:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ Ձեզ ամենեսեանդ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17 մարտի
յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 7.